

**ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Նարինե Սոլոմոնյան
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ,
ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ
Էլ-Փոստ: concourt@mail.ru

Երկքաղաքացիություն. Տնտեսական և Սոցիալական հետևանքները
ՀՄՔՀԽ համագումար

Հունիսի 17-18, 2006թ.
Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան

Երկքաղաքացիության իրավական կարգավորման առանձնահատկությունները

Քաղաքացիություն ունենալու իրավունքի ամրագրումը բխում է մի շարք միջազգային իրավական ակտերի դրույթներից,¹ որոնք ամրագրվել են գրեթե բոլոր պետությունների սահմանադրական եւ օրենսդրական ակտերի մակարդակով: Ուշագրավ է, որ ինչպես քաղաքացիությունը, այնպես էլ նրա ձեւերը իրավական կարգավորման առանձնահատուկ անհրաժեշտություն ունեն: Քաղաքացիության ձեւերից՝ երկքաղաքացիության եւ բազմաքաղաքացիության հարցերի միջազգային իրավական եւ սահմանադրաիրավական կարգավորման փորձեր կատարվել են շատ վաղ:

Երկու եւ ավելի քաղաքացիություն ունենալու իրավունքը գոյություն է ունեցել ավելի քան երկու հազարամյակների ընթացքում: Այն անցել է իր զարգացման բնական եւ օրինաչափ ուղին՝ երկքաղաքացիության մասին կանոնների բացառումից ընդհուպ նրա պայմանագրային եւ օրենսդրական ամրագրումը: Պատմականորեն երկքաղաքացիությունը առաջացել է քաղաքացիության ծագմանը զուգահեռ: Երկքաղաքացիության եւ բազմաքաղաքացիության հարցերի կարգավորումը հայտնի է դեռեւս Հին Հունաստանից: Որպես կանոն, Հին Հունաստանի քաղաքացի էր համարվում այն անձը, որն օժտված էր անօտարելի իրավունքներով, որոնք կազմում էին նրա կենսագործունեության հիմքը եւ, որն էլ տեղափոխվելով այլ պոլիս ձեռք չէր բերում այդ պոլիսի քաղաքացու կարգավիճակ: Քաղաքացիության տրամադրումը եւ երկքաղաքացիության հարցերի նկատմամբ մոտեցումը Հին Հունաստանի առանձին պոլիսներում հաճախ հիշեցնում է ժամանակակից առանձին պետությունների օրենսդրությունը, այդ թվում այն պետությունների, որոնք ձգտում են պահպանել ազգային միատարրությունը: Այսպես, 5-րդ դարում տարածքային բարեփոխումներից հետո, Կլիսֆենը (աթենական

¹ 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 15-րդ հոդված, 1966թ. Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 24-րդ հոդված, 1997թ. Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդված, Ռ-ասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին կոնվենցիայի 5-րդ հոդված, Երեւսայի իրավունքների մասին կոնվենցիայի 7-րդ հոդված, Մարդու իրավունքների մասին ամերիկյան կոնվենցիայի 20-րդ հոդված եւ այլն:

պետական գործիչ) փորձեց խառնել Հունաստանի բնակչությունը եւ այնտեղ ուժեղացնել ժողովրդավարական տարրերը: Այնուհետեւ խզեց հին կրոնական կապերը՝ միացնելով մարդկանց Հունաստանի տարբեր հատվածներից եւ վերածեց Աթենքը քաղաքական կենտրոնի: Այդ ժամանակահատվածում Աթենքում մշտապես բնակվում էին հունական պոլիսներ՝ Միլեթի, Սամոսի, Կորնիֆալի, Մեգարի եւ Սիզեի բնակիչները: Ինչպես նշում է Արիստոտելը, Կլիսֆենը ներմուծեց օտարների եւ ստրուկների, որով հավասարեցրեց բնիկ քաղաքացիներին եւ ժամանած բնակիչներին՝ ստեղծելով պայմաններ օրինական եւ ճանաչված երկքաղաքացիության զարգացման համար: Հետագայում, Աթենքի զարգացման ժամանակ, երկքաղաքացիության ճանաչման հնարավորությունները ընդլայնվեցին: Աղբյուրները վկայում են, որ արդեն Ֆեմիստոկլեսի օրոք սկսվեց մետեկների եւ արհեստավորների ներհոսքը, որոնցից շատերը դառնում էին Աթենքի քաղաքացիներ...

Նպատակ չունենալով վերլուծել երկքաղաքացիության պատմական ակունքները, միայն նշենք, որ երկքաղաքացիության կարգավիճակը միշտ էլ ոչ միանշանակ է ընդունվել տարբեր պետությունների կողմից, քանզի դրա շնորհումը ունի ինչպես իրավական, այնպես էլ քաղաքական նշանակություն առ այսօր:

1995թ. ՀՀ Սահմանադրությամբ արգելվում էր երկքաղաքացիության կարգավիճակի տրամադրումը: Պետք է նկատել, որ դա ուներ իր պատճառները, քանզի ընդդիմախոսների բանակը հիմնականում վկայակոչում էր այն հիմնական դժվարությունները, որոնք կարող էին ծագել երկքաղաքացիների իրավունքների իրացման եւ պարտականությունների կատարման ընթացքում: Ինչպես նաեւ որպես փաստարկներ բազմիցս է նշվել այլ պետության քաղաքացիների՝ Հայաստանի քաղաքական կյանքին մասնակից դարձնելու անթույլատրելիությունը, այդ ինստիտուտի միջոցով այլ պետությունների կողմից Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքականության վրա ազդելու անթույլատրելիությունը եւ այլն:² Որպես կողմ փաստարկ նշվում է մեծ սփյուռք ունենալը, հայ ժողովրդի առավել մեծ

² Վ. Պողոսյան, Ն.Թովմասյան: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը/Համառոտ պարզաբանումներ: Էջ 53, Երևան – 2005թ.:

զանգվածին Հայաստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքին մասնակից դարձնելու անհրաժեշտությունը, ներդրումների ծավալների ավելացումը եւ այլն:

Հատկապես այս փաստարկը հիմք հանդիսացավ երկքաղաքացիությունը սահմանադրորեն ամրագրելու համար եւ դրա օրենսդրական կարգավորումից է կախված տարբեր պետությունների քաղաքացիություն ունեցող անձանց ապագան:

2005թ. վերափոխված ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվեց երկքաղաքացիության կարգավիճակը: Սահմանադրական դրույթի բովանդակությունից ակնհայտ է դառնում երկքաղաքացիների իրավունքների եւ պարտականությունների օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը եւ մինչ հարցի օրենսդրական կարգավորումն այդ առնչությամբ առաջանում են վիճահարույց որոշ հարցեր:

Դիտարկենք երկու հիմնական հարց. արդյո՞ք երկքաղաքացիությունը պետք է ճանաչվի միայն ՀՀ քաղաքացիների, թե այս ենթահիմնատիտուտի սահմանադրական ամրագրումը կոչված էր մեկ այլ նպատակի՝ մեկ միասնական հայրենիքի ստեղծման համար՝ միավորելով ողջ աշխարհով սփռված հայությանը՝ նպաստելով հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, այլ պետություններում գտնվող հայկական պատմական եւ մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական եւ մշակութային կյանքի զարգացմանը:³ Նշված սահմանադրական դրույթը ամրագրում է այն հիմնական երաշխիքները, որոնք կամրապնդեն Հայաստան-Սփյուռք կապերը: Սակայն, մեկ այլ դրույթի համաձայն,⁴ որն ուղղակիորեն ամրագրում է քաղաքացիություն ունենալու իրավունքը եւ երկքաղաքացիության կարգավիճակ է նախատեսում, ոչ մի հիշատակում չկա այն մասին, թե ո՞վքեր կարող են ձեռքբերել երկքաղաքացիություն (օտարերկրացիները, ՀՀ քաղաքացիները, թե սփյուռքահայերը): Թերեւս պարզ է, որ օրենսդրի հետագա կարգավորմանն է թողնված նաեւ այս հարցի

³ ՀՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտի 11-րդ հոդվածի 2-րդ մաս: Երևան, 05.12.2005թ.:

⁴ ՀՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտի 30.1 հոդված: Երևան - 2005թ.:

հատակեցումը, սակայն այս հարցը հանդիսանում է այն մեկնակետը, որի հիման վրա հնարավոր կլինի երկքաղաքացիների իրավունքների իրացման եւ պարտականությունների կատարման իրավաբանորեն ճիշտ լուծումներ տալը:

ԱՊՀ ստեղծման մասին 1991թ. Բելովեժյան համաձայնագրերը հանդիսացան այն եզրագիծը ԽՍՀՄ պատմության մեջ, որը սկիզբ դրեց նորանկախ պետությունների հռչակման եւ դրանց բաղկացուցիչ ինստիտուտի՝ քաղաքացիության հաստատման եւ ամրագրման համար: ԱՊՀ ստեղծման վաղ շրջանում, մեկ միասնական իրավական հարթություն պահպանելու փորձերից էր՝ ԱՊՀ կողմից խորհրդատվական բնույթի «Քաղաքացիության կարգավորման համաձայնեցված սկզբունքների մասին» օրենսդրական ակտի ընդունումը, որով ճանաչվեցին քաղաքացիություն ունենալու եւ քաղաքացիության հարցերում խտրականության բացառման եւ այլ սկզբունքները: Այնուհետեւ, ԱՊՀ շրջանակներում երկքաղաքացիության իրավական կարգավորմանն ուղղված երկկողմ համաձայնագրեր կնքվեցին, ինչպես նաեւ այդ ենթահիմնատուտը կարգավորվեց օրենսդրորեն: Թեեւ, ԱՊՀ երկրների մի մասը չի ճանաչում միեւնույն ժամանակ երկու պետությունների քաղաքացիություն ունենալը առանձին օրենքներով, բայց եւ այդ ենթահիմնատուտը ճանաչող պետությունների կողմից դրա կարգավորման առանձնահատկությունները պետք է հաշվի առնվեն օրենսդրի կողմից ՀՀ նոր օրենքի նախագծի մշակման ժամանակ:

Անդրադառնալով երկքաղաքացիության հարցերին, հարկ է նկատել, որ թեեւ աշխարհում երկքաղաքացիությունը ճանաչող երկրների աճի միտում կա, սակայն որոշ պետություններ էլ դադարեցնում են միմյանց միջեւ գործող երկքաղաքացիության հարցերի կարգավորմանն ուղղված երկկողմ պայմանագրերի գործողությունը:⁵ Ինչեւէ, մինչեւ 2002թ. 89 պետություններ, եթե նույնիսկ չէին խրախուսում, ապա չէին էլ արգելում այդ

⁵ 2003թ. ապրիլի 10-ին ՌԴ եւ Թուրքմենստանի Նախագահները ստորագրել են ՌԴ եւ Թուրքմենստանի միջեւ երկքաղաքացիության հարցերի կարգավորման մասին համաձայնագրի գործողությունը դադարեցնելու մասին Արձանագրություն: Ուշագրավ է, որ թեեւ Թուրքմենստանի 2003թ. օգոստոսի 15-ի Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն երկքաղաքացիությունը չի ճանաչվում, բայց Թուրքմենստանում դեռեւս շարունակում է գործել Քաղաքացիության մասին օրենքը, համաձայն որի Թուրքմենստանը ճանաչում է երկքաղաքացիությունը:

ենթահնատիտուտի գոյությունը: Ուստի, երկքաղաքացիության ամրագրումը 2005թ. ՀՀ վերափոխված Սահմանադրության մեջ կարելի է համարել առաջընթացային ձեռքբերում է մարդասիրական բնույթի նորմ, քանզի, դա ոչ միայն ինտեգրացիայի է միգրացիոն գործընթացների արձագանքն ու ՀՀ մեծ սփյուռքի առկայությունն է, այլև մարդու բնական իրավունքների իրացման հնարավորության ընձեռում: Որպեսզի Հայաստանն իրապես դառնա ողջ հայության հայրենիքը է մեր ազգային համահավաք ներուժը մեր ժողովրդի ապագայի երաշխիքը լինի, անհրաժեշտ է կարելու է, որպեսզի յուրաքանչյուր հայ Հայաստանում իրեն օտար է մերժված չզգա է ակտիվ մասնակից լինի ազգային-պետական առաջնահերթությունների իրացման գործին:⁶

Ելնելով ազգային միավորման է Հայաստան-Սփյուռք կապերի էլ ավելի ակտիվացման նպատակներից, իհարկե ողջունելի է նմանաբովանդակ դրույթի սահմանադրական ամրագրումը, թե ինչպիսի իրավունքներով է պարտականություններով օժտված կլինեն հայ ազգի երկքաղաքացիները կանդրադառնանք ավելի ուշ: Սակայն, ստեղծվում է մի իրավիճակ, որն ենթադրում է ազգի միավորման հնարավորություն է մյուս կողմից էլ նույն ազգի մյուս ներկայացուցիչները նման հնարավորության ընձեռումից կարող են ոչ ազգապահպան քաղաքականության կրողներ դառնալ, մասնավորապես խոսքը վերաբերում է ՀՀ քաղաքացիներին: Այսինքն, բացառված չէ, որ ՀՀ քաղաքացիների զգալի հատվածը զուգահեռ ձեռք բերեն օտարերկրյա քաղաքացիություն, որն էլ տարիների ընթացքում չի բացառվում հանգեցնի այն իրավիճակին, որ ՀՀ քաղաքացիները հրաժարվեն իրենց ՀՀ քաղաքացիությունից: Կամ մեկ այլ իրավիճակ, երբ ՀՀ քաղաքացիները հրաժարվեն ՀՀ քաղաքացիությունից, է որոշ ժամանակ անց արդեն որպես սփյուռքի երկքաղաքացիներ փորձեն ձեռքբերել ՀՀ քաղաքացիություն: Այս էլ այլ մտավախությունների պարագայում, անհրաժեշտ է կանխել նման իրավիճակները է ընձեռել երկքաղաքացու կարգավիճակը առավելապես սփյուռքահայությանը՝ հայկական ծագումը հավաստող ապացուցողական

⁶ Գ. Հարությունյան /Սահմանադրական բարեփոխումներ, 2005թ./: <http://www.yerkir.am/arm/index.php?sub=interview&id=45>.

նշանակության փաստաթուղթ ներկայացնելու դեպքում եւ բնակության ցենզի հիման վրա: Հայաստանի Հանրապետության դեպքում, դա ոչ միայն կարող է դառնալ ՀՀ շահերի քաղաքական լոբբինգի հիմք, այլեւ ՀՀ տնտեսության զարգացման խթան:⁷

Բնականաբար հարց է ծագում, արդյոք սա խտրականություն չէ ՀՀ քաղաքացիների նկատմամբ: Իրավահավասարությունը պահանջում է արդար վերաբերմունք բոլորի հանդեպ, ինչը նշանակում է, որ ազգությամբ բոլոր հայերը պետք է օգտվեն իրենց սահմանադրորեն ընձեռված այդ իրավունքի իրացման հնարավորությունից: Սակայն առկա է ազգային անվտանգության հարցերի գերակայության խնդիր Հայաստանի Հանրապետության ընթացիկ եւ հետագա զարգացման ռազմավարական, քաղաքական եւ իրավական հիմնահարցերի տեսանկյունից: Բացառելու համար խտրականության եւ տրայբալիզմի դրսևորումները,⁸ այդ իրավունքի իրացման հնարավորություն պետք է ընձեռել նաեւ ՀՀ քաղաքացիների համար, սակայն որոշ վերապահումներով. ՀՀ քաղաքացիներին երկքաղաքացիության կարգավիճակ շնորհել միայն այն դեպքում, երբ տվյալ քաղաքացին հատուկ ծառայումներ մատուցի Հայաստանի Հանրապետությանը, կամ էլ երկքաղաքացիության կարգավիճակի շնորհումը բխի ազգային շահերից, ինչպես նաեւ երկու կոնկրետ պետությունների միջեւ որոշ դեպքերում կնքվի միջազգային պայմանագիր:

Սփյուռքահայությանը երկքաղաքացիության կարգավիճակ շնորհելը բխում է նաեւ մեր երկրի սոցիալ-տնտեսական, հոգեւոր-մշակութային եւ դեմոգրաֆիական աճի հիմնախնդիրների լուծման նպատակահարմարությունից: Նկատենք, որ երբեմն նույն անձն ունի (ընդ որում անօրինական, այսինքն երկու պետություններից որեւէ մեկի

⁷ Հիշատակենք Չինաստանի օրինակը, որի սփյուռքը օգնեց Չինաստանին 15 տարվա ընթացքում դուրս գալ ծանր սոցիալ-տնտեսական վիճակից: Դէն Սյաոպինը հռչակել էր, որ յուրաքանչյուր չինացի անկախ իր բնակության վայրից, Չինաստանի քաղաքացի է եւ ընդունվել էր հատուկ որոշում, համագործակցության կոնկրետ ծրագիր էր մշակվել՝ արտերկրյա չինացիների ինտեգրման հետ կապված: Արդյունքում, արտերկրյա չինական կապիտալի մեծ հոսք էր արձանագրվել:

⁸ Տրայբալիզմ՝ փաստացիորեն հանգեցնում է քաղաքացիների իրավահավասարության սկզբունքի դադարեցմանը: /տես՝ Բ.Ա. Էծօֆեօ. Կի օեօեի՛ օեօե-օեօե Իծեօե-օեօե նիօ օեօե. 2-ի օ օեօե օե -ի ., Էի օԾօ-ի ., 1999ա./:

թույլատրելիությունը առկա չէ) միաժամանակ երկու պետություններին իր պատկանելիությունը հավաստող փաստաթուղթ: Այս համատեքստում պետք է հաշվի առնել, որ երկքաղաքացիությունը եւ միաժամանակ երկու պետությունների քաղաքացիություն ունենալը դասական առումով տարբեր իրավական կատեգորիաներ են: Երկքաղաքացիությունը ենթադրում է երկու երկրների միջեւ երկկողմ պայմանագրի առկայություն, մինչդեռ երկրորդի դեպքում՝ (միաժամանակ երկու պետությունների քաղաքացիություն ունենալը) պարտադիր չէ երկկողմ միջպետական համաձայնագրերի կնքումը (իհարկե, եթե անձը երկու պետությունների քաղաքացի է, եւ ոչ թե երկքաղաքացի, ապա ՀՀ տարածքում այդ անձի օտարերկրյա քաղաքացիությունը չի ճանաչվի, այսինքն, անձը չի կարող օգտվել երկրորդ երկրի աջակցությունից եւ պաշտպանությունից): Վկայակոչելով այլ երկրների այս հարցին առնչվող օրենսդրական ակտերը, պետք է նշել, որ որեւէ պետության քաղաքացու կողմից օտարերկրյա քաղաքացիության ձեռքբերումը չի հանգեցնում մյուս պետության քաղաքացիության դադարեցմանը: Համապատասխանաբար, որպեսզի մեկ երկրի քաղաքացիները ձեռք բերեն որեւէ այլ պետության քաղաքացիությունն որպես երկրորդ քաղաքացիություն, այդ երկրների օրենսդրությունը չպետք է ուղղակիորեն արգելի նրանց այլ պետության քաղաքացիություն ունենալու իրավունքը: Այդ նույն օրենսդրական ակտերում կատարվում է հետեւյալ վերապահումը, որ այլ քաղաքացիություն ընդունելը իրականացվում է, եթե քաղաքացիները դիմել են օտարերկրյա պետության իրավասու մարմնին իրենց քաղաքացիությունից հրաժարվելու մասին դիմումով: Այստեղ եւս վկայակոչվում է հետեւյալը. «Որեւէ պետության քաղաքացիությունից հրաժարվելը չի պահանջվում, եթե դա նախատեսված է մեկ այլ պետության միջազգային պայմանագրով կամ օրենքով, կամ եթե օտարերկրյա քաղաքացիությունից հրաժարվելը հնարավոր չէ անձից անկախ պատճառների ուժով»: Հենց այս դեպքերում է անհրաժեշտ նախընտրել միջազգային պայմանագրերի կնքման ուղին:

Որդեգրելով միջազգային պայմանագրային եւ օրենսդրական կարգավորումը՝ որպես երկքաղաքացիների կարգավիճակի լուծման եղանակ,

հարկ է պարզաբանել երկքաղաքացիության եզրույթի բովանդակային հասկացությունը, որն էլ հնարավորություն կընձեռի երկքաղաքացիների իրավունքների եւ պարտականությունների օրենսդրական կարգավորման առումով: Երկքաղաքացիության եզրույթի վերաբերյալ պայմանագրային եւ օրենսդրական ակտերում տրվել են միմյանցից իրենց ձեւակերպումներով տարբերվող հասկացություններ: Հատկանշական է նաեւ

երկքաղաքացիության ձեռքբերման կարգն ու հիմքերը: Ըստ իրավագետ Ս.Ա. Ավագյանի. «Երկքաղաքացիությունը՝ քաղաքացու հնարավորություն է ունենալ այլ պետության քաղաքացիություն (երկքաղաքացիություն) համաձայն միջազգային պայմանագրի եւ դաշնային օրենքի»: ⁹ Այսպես օրինակ, Թուրքմենստանը ճանաչում է երկքաղաքացիությունը, այսինքն Թուրքմենստանի քաղաքացիության հետ մեկտեղ մարդու պատկանելիությունը այլ պետության քաղաքացիությանը: ¹⁰ Իսկ «Քաղաքացիության մասին»

Լատվիայի օրենքի համաձայն երկքաղաքացին այն անձն է, որն ավելի, քան մեկ պետության քաղաքացի է հանդիսանում: Ըստ Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիայի, «բազմաքաղաքացիությունը» նշանակում է միեւնույն անձի մոտ երկու կամ ավելի պետությունների քաղաքացիության առկայություն, ¹¹ այսինքն երկքաղաքացիության ու բազմաքաղաքացիության հասկացությունները նույնացվում են:

Ավստրալիայի Քաղաքացիության մասին օրենքի համաձայն, ավստրալացին կարող է երկքաղաքացիություն կամ բազմաքաղաքացիություն ունենալ, երբ ավելի քան մեկ երկիր ճանաչել են այդ անձին որպես իր քաղաքացի:

Աբխազիայի Հանրապետության «Քաղաքացիության մասին» օրենքի համաձայն Աբխազիայի Հանրապետության քաղաքացին կարող է ձեռք բերել նաեւ այլ պետության քաղաքացիություն: Աբխազիայի Հանրապետության քաղաքացու կողմից այլ քաղաքացիության ձեռքբերումը հիշյալ օրենքի

⁹ Ն.Ա. Ասաբեյլի. Փլի ռիթյ: ձձաթաի ռձաի, էի ի ռձձաի օն, աի աթի յյ ի էձձաթեյ. Նի՛ ա.: Էթաձձաթեյնձաի
“Բ ձեթե-թեթե օաի օձ Ի ձաթի”, Նաի էթ-Ի ձձաթաթձա, 2003թ.

¹⁰ Քաղաքացիության մասին Թուրքմենստանի օրենքի 9-րդ հոդված /14.06.2003թ. կատարված փոփոխություններով եւ լրացումներով/:

¹¹ Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդված «Սահմանումներ»: 1997թ.:

համաձայն չի հանգեցնում Արխագիայի Հանրապետության քաղաքացիության դադարեցմանը:

Քննարկվող խնդրի վերաբերյալ ուշագրավ են նաև Հնդկաստանի և Ֆինլանդիայի օրենսդրությունները: Հնդկաստանի խորհրդարանը 2003թ. դեկտեմբերի 22-ին «Քաղաքացիության մասին» Հնդկաստանի օրենքում փոփոխություններ կատարեց, համաձայն որի հնդիկ ծագումով անձանց իրավունք վերապահվեց ստանալ երկքաղաքացիություն: 2003թ.

«Քաղաքացիության մասին» Հնդկաստանի օրենքի փոփոխություններով նախատեսվում էր պարզեցնել հնդկական քաղաքացիության շնորհումը նախկինում հնդկական քաղաքացիություն ունեցողներին և նրանց զավակներին: Այդ իրավական ակտը հնդիկ երկքաղաքացիներին կօգնի երկքաղաքացիություն ստանալ հետևյալ 16 երկրների հետ. ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ավստրալիա, Կանադա, Կիպրոս, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Հունաստան, Իռլանդիա, Իսրայել, Իտալիա, Նիդեռլանդներ, Չեխիայի Հանրապետություն, Եգիպտոս, Եթովպիա, Բելգիա, Բուլղարիա:

Ֆինլանդիայի 2003թ. «Քաղաքացիության մասին» օրենքում կատարված փոփոխությունների համաձայն հնարավորություն է ընձեռվում օտարերկրյա քաղաքացիություն ձեռք բերել առանց Ֆինլանդիայի քաղաքացիությունը կորցնելու:

Վերոհիշյալ և այլ պետությունների սահմանադրությունների և քաղաքացիության մասին օրենքների ուսումնասիրության հիման վրա,¹² փորձենք երկքաղաքացիության եզրույթի բնորոշումը տալ. երկքաղաքացիությունը՝ միեւնույն անձի պատկանելիությունն է միաժամանակ երկու պետություններին: Այս սահմանումը պետք է ՀՀ օրենքի նախագծի մշակման ժամանակ օրենսդրի կողմից հաշվի առնվի և հիմք ընդունվի երկու պետություններին անձի պատկանելիությունը և ոչ թե երկու և ավելի պետություններին անձի պատկանելու գործոնը, քանզի դրանով մեխանիկորեն կնախատեսվի նաև բազմաքաղաքացիություն ունենալու իրավունքը:

¹² www.concourt.am-Legal Resources-Citizenship.

Վերջինիս առնչությամբ էլ ծագում է երկրորդ հարցադրումը, որն ուղղակիորեն բխում է երկքաղաքացիների իրավունքների եւ պարտականությունների կարգավորման սահմանադրական դրույթից: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ երկքաղաքացիների հատկապես այնպիսի պարտականությունների, ինչպիսիք են զինապարտությունն ու հարկումն է, կարգավորվում է բազմակողմ եւ երկկողմ միջազգային իրավական ակտերով: Երկքաղաքացիների իրավունքների իրացման առնչությամբ, մեր կարծիքով, ծագում է հետեւյալ հարցը. արդյոք ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ՀՀ քաղաքացիների իրավունքները կվերապահվեն նաեւ երկքաղաքացիներին, մասնավորապես հարցը վերաբերում է քաղաքական իրավունքներին (ընտրելու եւ ընտրվելու իրավունքներին):

Նախ նշենք, որ երկքաղաքացիները տվյալ պետության քաղաքացիների հետ համահավասար ունեն նույն իրավունքներն ու պարտականությունները, որոնք բխում են Ազգության մասին եվրոպական կոնվենցիայում ամրագրված սկզբունքներից (17-րդ հոդվածի 1-ին կետ, ԵԽ), համաձայն որի որեւէ պետության տարածքում բնակվող երկքաղաքացիները ունեն հավասար իրավունքներ եւ պարտականություններ տվյալ պետության քաղաքացիների հետ եւ Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիայից, համաձայն որի, այլ պետության քաղաքացիություն ունեցող քաղաքացիները մյուս պետության տարածքում, որտեղ բնակվում են, օժտված են նույն իրավունքներով եւ կրում են նույն պարտականությունները, որը եւ տվյալ պետության քաղաքացիները: Սա նշանակում է, որ ՀՀ-ը կպարտավորվի ուղղակիորեն կատարելու վերոհիշյալ դրույթների պահանջները, սակայն այդ իրավունքներն ու պարտավորությունները կյանքի կկոչվեն ՀՀ-ում երկքաղաքացիների համար՝ միայն բնակություն (առավելապես, թե մշտապես) հաստատելուց հետո, այլապես նրանց կշնորհվի պարզապես երկրորդ քաղաքացիություն (երկրորդ անձնագրի առկայությամբ եւ յուրաքանչյուր պետության կողմից կոֆիտվի միայն որպես իր քաղաքացի), որը երկքաղաքացիներին ոչ մի հնարավորություն չի ընձեռի օգտվելու իրենց իրավունքներից:

Երկքաղաքացիների իրավունքների եւ պարտականությունների օրենսդրական կարգավորման գործընթացին բնորոշ են որոշ առանձնահատկություններ: Դեռեւս հին ժողովրդավարությունները քաղաքացիությունը սերտորեն կապում էին զինապարտության հետ,¹³ որոշելով անձի քաղաքացիությունը կոնկրետ երկրի զինված ուժերին պատկանելու հատկանիշով: Միջազգայնագետ Ի. Բլյունչլին նշում է. »Ջինապարտությունը իր բնույթով քաղաքական պարտավորություն է եւ այդ պատճառով չի կարող առանձնացվել հպատակությունից«:¹⁴ Դա ապացուցվում է նրանով, որ առ այսօր որոշ պետություններ պահանջում են (ԱՄՆ, Կանադա եւ այլն), որպեսզի անձինք, ովքեր ընդունում են այդ երկրների քաղաքացիությունը կամ դասվում են դրանց զինված ուժերին, պարտադիր պետք է հավատարմության երդում տան:

Երկքաղաքացիների զինապարտության հիմնախնդիրները ժամանակակից աշխարհում նույնպես ամբողջությամբ կարգավորված չեն, սակայն պետությունների մի մասը հիմնահարցը կարգավորում են երկկողմ միջպետական համաձայնագրերի միջոցով: Այսպես օրինակ, երկքաղաքացի զինապարտների խնդիրներով առանձին միջազգային համաձայնագրերի օրինակներ կարող են հանդիսանալ ԱՄՆ-ի կողմից եվրոպական երկրների հետ կնքված համաձայնագրերը՝ Նորվեգիայի (1930թ.), Շվեդիայի (1933թ.), Շվեյցարիայի (1937թ.) եւ Ֆինլանդիայի հետ (1939թ.), եվրոպական երկրների միջեւ կնքված առանձին միջազգային պայմանագրեր՝ Շվեյցարիայի եւ Ֆրանսիայի միջեւ (1958թ.), Ֆրանսիայի եւ Իսրայելի միջեւ (1959թ.), Ֆրանսիայի եւ Իսպանիայի (1970թ.), ինչպես նաեւ զինվորական ծառայության մասին Արգենտինայի եւ Ֆինլանդիայի միջեւ (1963թ.), Արգենտինայի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ (1963թ.) եւ այլն: ԱՄՆ-ի եւ նշված եվրոպական երկրների միջեւ կնքված պայմանագրերը դրույթներ են պարունակում այն մասին, որ երկքաղաքացիները պարտավոր են կրել զինվորական ծառայությունն այն պետությունում, որի տարածքում

¹³ Տե՛ս՝ Аристотель. Политика. Афинская Полития. М., 1997. История Европы. Т. 1. Древняя Европа. М., 1988.

¹⁴ Блюнчли И. Современное международное право цивилизованных государств, изложенное в виде кодекса. Выпуск второй. М., 1877. С. 245.

առավելապես բնակվել են եւ որի հետ սերտ կապեր են ունեցել: Այն դեպքում, երբ այդ երկքաղաքացիները զինվորական պարտականությունը կրում են մեկ երկրի տարածքում, ապա համարվում են զինապարտությունը կատարած երկրորդ պետության նկատմամբ: Այդ պայմանագրերով որոշվում էր երկքաղաքացիների պարտադիր զինվորական ծառայության կարգավորման խնդիրները՝ ելնելով արդյունավետ քաղաքացիության սկզբունքից:

ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովի 6-րդ նստաշրջանի բազմաքաղաքացիության մասին զեկույցում նշված են արդյունավետ քաղաքացիության հետեւյալ հատկանիշները.

-անձի բնակությունը այն պետության տարածքում, որի քաղաքացիությամբ նա օժտված է,

-անձի նախկին կամ առավելապես բնակությունը այն պետություններից մեկում, որի քաղաքացիությամբ նա օժտված է,

-նշված հատկանիշների բացակայության դեպքում արդյունավետության չափորոշիչներ են համարվում՝ համապատասխան պետությունում զինվորական ծառայությունը, քաղաքական իրավունքների իրացումը կամ պետական ծառայությունը, ինչպես նաեւ լեզուն, նախկինում տվյալ պետությանը դիվանագիտական պաշտպանության տրամադրման մասին դիմելու խնդրանքը եւ անշարժ գույքի տիրապետումը:

Անդրադառնալով վերոհիշյալ միջազգային իրավական ակտերին, նշենք, որ Ֆրանսիայի եւ Իսրայելի միջեւ զինապարտության մասին 1959 թվականի հունիսի 30-ի պայմանագրում նախատեսված էր, որ երկքաղաքացիները (իհարկե հաշվի չառնելով նրանց, ովքեր հպատակագրման կարգով իրենց երկրորդ քաղաքացիություն են ձեռք բերել) զինվորական ծառայությունը կկրեն իրենց մշտական բնակության պետությունում: Երրորդ պետությունում մշտապես բնակվելու պարագայում, համաձայն պայմանագրի, այդ անձինք իրավունք ունեն որոշելու թե կոնկրետ որ երկրում կկրեն պարտադիր զինվորական ծառայությունը: Ուշագրավ է այն փաստը, որ զինվորական ծառայությունը մեկ պետությունում կատարած անձինք, եւ որոնք ունեն մշտական բնակություն այդ կամ երրորդ պետությունում, համարվում են իրենց զինվորական պարտավորությունը

կատարած իրենց երկրորդ քաղաքացիության պետության նկատմամբ, բայց մինչև այն ժամանակը, երբ չեն տեղափոխվել մշտական բնակության այդ երկրորդ պետություն, իսկ նման տեղափոխման դեպքում նրանք պարտավոր են զինվորական ծառայություն կրել կրկնակի:

Ֆրանսիայի եւ Իսպանիայի միջև երկքաղաքացիության դեպքում զինապարտության մասին 1970թ. երկկողմ պայմանագիրը նախատեսում էր, որ երկքաղաքացին պարտավոր է անցնել պարտադիր զինվորական ծառայություն այն պետության տարածքում, որտեղ նա երկարատեւ ապրել է վերջին 12 ամիսների ընթացքում՝ մինչև 18 տարին լրանալը:

Երկքաղաքացիների զինապարտության կարգավորման միջազգային պայմանագրային պրակտիկայից բխում են հիմնարար սկզբունքներ (այս մասին է վկայում 1930թ. Երկքաղաքացիության որոշ դեպքերում զինվորական ծառայության մասին Արձանագրությունը, 1963թ. Բազմաքաղաքացիության դեպքերի թվի եւ բազմաքաղաքացիության դեպքերում զինապարտության կրճատման մասին Կոնվենցիան, 1997թ. Քաղաքացիության մասին եվրոպական Կոնվենցիան եւ այլ միջազգային իրավական ակտեր), որոնք, մեր կարծիքով, պետք է հաշվի առնվեն երկքաղաքացիության ՀՀ օրենքի նախագծի մշակման ժամանակ օրենսդրի կողմից.

ա) երկքաղաքացիները զինծառայությունը պետք է կրեն մշտական բնակության պետությունում: Այնուամենայնիվ, նրանք մինչև 19 տարին լրանալը կարող են մյուս քաղաքացիության պետությունում զինծառայություն կրել որպես կամավորական այն ժամկետին համարժեք, որը հավասար է իրենց մշտական բնակության պետությունում սահմանված ծառայության ժամկետին: Պետությունները համաձայնվում են, որ երկքաղաքացին զորակոչվի այն երկրում, որտեղ նա մինչ զորակոչի տարիքը մշտապես բնակվում է, որը նրան ազատում է զինապարտությունից այլ երկրում, որի քաղաքացին նա նույնպես հանդիսանում է: Որոշ դեպքերում նման երկքաղաքացի-զինապարտին ընտրության հնարավորություն է ընձեռվում,

բ) անձինք, ովքեր մշտապես բնակվում են միջպետական պայմանագրի մասնակից պետության տարածքում, եւ չեն հանդիսանում նրա քաղաքացիները, կամ այն պետության տարածքում, որը չի հանդիսանում

նշված պայմանագրերի մասնակից պետություն, կարող են
զինապարտությունը իրենց կամահայտնությամբ կրել ցանկացած մասնակից
պետության տարածքում, որի քաղաքացիները իրենք հանդիսանում են,

գ) վերջին դեպքում, նշված կանոնների համաձայն, զինծառայությունը
կրած անձինք համարվում են իրենց զինապարտությունը կատարած՝
պայմանագրի ցանկացած մասնակից պետության նկատմամբ,

դ) անձինք, ովքեր մինչև քաղաքացիության հարցերով միջազգային
պայմանագրերի ուժի մեջ մտնելը կրել են զինապարտություն, համարվում են
մյուս պետության նկատմամբ զինապարտությունը կատարած,

ե) մշտական բնակության վայրում զինվորական ծառայություն կրած
երկքաղաքացին իր երկրորդ քաղաքացիության երկրում մշտական
բնակության տեղափոխվելուց հետո, ենթակա է զորակոչի վերջին
պետությունում՝ միայն որպես պահեստային զինծառայող:

Ինչ վերաբերում է պատերազմող պետությունների
երկքաղաքացիներին, ապա նշենք, որ միջազգային պրակտիկան այս հարցի
առնչությամբ գրեթե կարգավորված չէ, միայն կարելի է վկայակոչել 1949թ.
Ժնևի կոնվենցիաները եւ դրանց լրացուցիչ Արձանագրությունները, որոնք եւս
մասամբ են լուծում առաջացած հիմնախնդիրները, նախատեսելով, որ
երկքաղաքացին պետք է զորակոչվի այն պետության զինված ուժերում,
որտեղ մշտապես բնակվում է:

Երկքաղաքացիների ընտրական իրավունքի իրացման հարցերը
կարգավորելիս, պետք է նշել, որ հիմք կարող է ծառայել բնակության ցենզը
կոնկրետ պետությունում: Ինչպես վկայում է այս հարցի շուրջ միջազգային
պրակտիկան, ապա պետք է նշել, որ ոչ միայն երկքաղաքացիներին, այլև
օտարերկրացիներին¹⁵ թույլատրվում է օգտվել իրենց քաղաքական
իրավունքներից՝ որոշակի սահմանափակումներով, որն իրավաչափ է
դիտվում միջազգային հանրության կողմից: Այսպես օրինակ, մասնակցել
միայն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությանը, այն էլ

¹⁵ www.coe.int /Êîí ááí öëÿ í á ó-áñòèè èíí ñòðáí òáá á í áúáñòááí í í é æèçí è í à ì áñòí í í òðí áí á,
í ðááí ñòááëÿ] ò áÿ í í í áèì è í í ñòðáí òáì í ðááí í á ó-áñòèè á áúáí ðáò í í Õí ðì è ðì ááí è] í áñòí Òð í ðááí í á
áèáñòè è è í úá í ðááá, í ðèáèèæèäÿ èð ñòáðóñ è ñòáðóñó áðáæááí áí ñòááðñòá/.

երկքաղաքացիություն տրամադրող պետությունում որոշակի ժամանակ բնակություն հաստատելուց հետո (Շվեդիայում՝ 3 տարի բնակվելուց հետո, Նորվեգիայում՝ 1983թ., Նիդեռլանդներում՝ 1985թ., բայց նրանց ովքեր բնակվել են ոչ պակաս, քան 5 տարի: Այս հարցը իր առանձնահատուկ կարգավորումն է ստացել Մեծ Բրիտանիայում, որտեղ ներգաղթողներին թույլատրվում է մասնակցել ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությանը, այլև համապետական, բայց այն դեպքում, երբ մյուս պետությունը պահպանում է այդ հարցում փոխադարձության սկզբունքը, այսինքն տրամադրելով նույն պայմանները, օրինակ Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի միջեւ փոխադարձության սկզբունքի կիրառումը): Այն պետություններում, որտեղ արգելվում է երկքաղաքացիներին ընտրական իրավունքներով օժտելը, սպա ելնելով իրավահավասարության պահպանման միտումներից, նրանց թույլատրվում է մասնակցել քաղաքական կյանքի մյուս ոլորտներում (միավորումներ կազմել, երթեր, ցույցեր անցկացնել կամ այլ եղանակների միջոցով մասնակցել քաղաքական կյանքին):

Այն դեպքում, երբ երկքաղաքացիները հրաժարվում են իրենց բնակության երկրի նկատմամբ լոյալությունից, սպա այդ դեպքում ընտրական իրավունքներից զրկելը հանդիսանում է յուրաքանչյուր պետության պաշտպանության բնական միջոց /նման պրակտիկա գործում է ԱՄՆ-ում եւ Եվրոպական միության մի շարք երկրներում/:

Որոշ պետություններում երկքաղաքացիություն ունեցող անձանց նկատմամբ գործում են որոշակի սահմանափակումներ ոչ միայն ընտրովի, այլև նշանակովի պաշտոններ զբաղեցնելու հարցում (օր. Լատվիա՝ պատգամավորների, նախարարների, դեսպանների, հատուկ ծառայությունների ղեկավարների, դատախազների, դատավորների եւ այլն, ԱՄՆ-ում՝ երկքաղաքացիներն ունեն ընտրելու, բայց ոչ ընտրվելու իրավունք):

Դիտարկելով երկքաղաքացիների իրավունքների եւ պարտականությունների որոշ հարցեր, անհրաժեշտ է նկատել, որ երկքաղաքացիների սահմանադրական իրավունքների եւ պարտավորությունների ընձեռումը ՀՀ-ում պետք է լուծվի համապատասխան

միջպետական պայմանագրերի՝ հաշվի առնելով արդյունավետ
քաղաքացիությանը սկզբունքը, ինչպես նաև օրենսդրական կարգավորման
միջոցով, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլինի առավելապես հաշվի
առնել մի կողմից երկքաղաքացիների շահերը, մյուս կողմից՝ մեր պետության
շահերը, որի քաղաքացիությամբ օժտված կլինեն երկքաղաքացիները: